ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 2, 1958 Общественные науки

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

# «ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՆ ԵՎ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ»* ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան, որի փառապանծ 40-ամյակը վիթխարի ոգևորությամբ նշվեց Սովետական Միության, սոցիալիզմի լագերի ժողովուրդների ու աշխարհի պրոգրեսիվ մարդկության կողմից, ազատության ու ազգային վերածննդի հնարավորություն տվեց Ռուսաստանի նախկինում ճնշված բոլոր ժողովուրդներին, այդ թվում և հայ ժողովրդին։

Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ Հայաստանում Սովետական իշխանության հաղթանակի ու ամրապնդման համար մղած պայքարի պատմությանն է նվիրված Հայպետհրատի վերջերս լույս ընծայած «Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում (փաստաթղթերի ժողովածու)» գիրքը։ Ժողովածուն կազմել և հրատարակության են պատրաստել ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալը, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտը և Հայկական ՍՍՌ Ներքին գործերի մինիստրության արխիվային բաժինը։

Ժողովածուի մեջ տեղ են գտել Մոսկվայի, Լենինգրադի, Բաքվի, Թբիլիսիի, Երևանի պետական ու պարտիական արխիվներից, ինչպես և պարտիական մամուլից ու գրականությունից առնված կարևոր փաստաթղթեր և նյութեր։ Այդ փաստաթղթերը վերաբերում են 1917 թ. փետրվարից մինչև 1922 թ. փետրվարն ընկած ժամանակամիջոցը՝ երկրում, մասնավորապես Հայաստանում, տեղի ունեցած պատմական նշանակալից իրադարձություններին։

Կազմողները փաստական բազմաթիվ տվյալներով ցույց են տվել Սովետական Միության Կոմունիստական պարտիայի դերը հայ ժողովրդի ազատագրության ու ազգային վերածնության գործում, վեր հանել ռուս ժողովրդի եղբայրական անշահախնդիր օգնությունը հայ ժողովրդին։

Բերված փաստաթղթերի մեծ մասը մերկացնում է գերմանա-թուրքական ու անգլո-ֆրանսիական-ամերիկյան իմպերիալիզմի նենգ քաղաքականությունը Հայաստանի, հայ ժողովրդի նկատմամբ. փաստաթղթերի մի այլ մասից երևում է, թե ինչպես են Հայաստանի աշխատավորները պայքարել իրենց կեղեքիչների դեմ։

«Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում» ժողովածուն կազմված է ժամանակագրական կարգով. այն բաղկացած է առաջաբանից, հինգ գլուխներից, կարևոր իրադարձությունների ժամանակագրությունից, ծանոթագրություններից, առարկայական և աշխարհագրական ցանկերից։

Առաջաբանում համառոտակի բնութագրված է Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի նշանակությունը, ժողովածուի խնդիրներն ու նպատակները և այն կազմելու հանգամանքները։

Առաջին գլուխը՝ «Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի նախապատրաստման շրջանում (1917 թ. փետրվար-հոկտեմբեր)», նվիրված է Հայաստանի բանվորների, գյուղացիների և տեղի զինվորների ռևոլյուցիոն ելույթների լուսաբանմանը։ Այն սկսվում է ՌՍԴԲՊ(բ) Կենտրոնական Կոմիտեի 1917 թ. փետրվարի 26-ի Մանիֆեստով, որով մասսաներին կոչ է արվում ստեղծել ժամանակավոր ռևոլյուցիոն կառավարություն։ Այնուհետև բերվում են փաստաթղթեր, որոնք ցույց են տալիս, թե ինչպիսի իրադարձություն էր ստեղծվել երկրում բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայից սոցիալիստական ռևոլյուցիային անցնելու ժամանակաշրջանում։ Այդ փաստաթղթերը վկայում են, որ փետրվարյան ռևոլյուցիայից հետո երկիշխանություն ստեղծվեց նաև Անդրկովկասում, ի դեմս մի կող-

---

* „Великая Октябрьская революция и победа Советской власти в Армении" (сборник документов), под редакцией А. Н. Мнацаканяна, А. М. Акопяна, Г. М. Даллакяна.

մից՝ Ժամանակավոր կառավարության տեղական օրգան՝ Անդրկովկասյան Հատուկ Կոմիտեի ու նրա գործադիր կոմիտեների, մյուս կողմից բանվորների, զինվորների ու գյուղացիների դեպուտատների Սովետների։ Փաստաթղթեր են բերված Երևանում, Ալեքսանդրոպոլում, Կարսում և Հայաստանի շատ վայրերում ստեղծված Սովետների, աճող ռևոլյուցիոն շարժումների ծավալման մասին։ Մի շարք փաստաթղթեր վկայում են Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների ուժեղացող ազդեցությունը բանվորների, գյուղացիների ու զինվորների շրջանում։ Տվյալներ են բերված այդ շրջանում Երևանի, Ալեքսանդրոպոլի բանվորների, Կողբի աղահանքերի և այլ վայրերի բանվորական գործադուլների, բանվորների դեպուտատների Սովետների գործունեության մասին։ Համեմատաբար հաջող են լուսաբանված Հայաստանի գյուղացիական ռևոլյուցիոն շարժումները։ Առանձնապես հետաքրքիր են Արզարյանդ գյուղի գյուղացիների 1917 թ. ելույթները գարնան և ամռան ամիսներին։ Արզարյանդի գյուղացիները ընտրում են գյուղացիական ռևոլյուցիոն կոմիտե, որը և անմիջականորեն գլխավորում էր կալվածատերերի ու իշխանության դեմ ուղղված իրենց ելույթները։ «Բնակչությունը Գործադիր կոմիտե ընտրեց Արզարյանդ գյուղի համար,— ասված է կալվածատեր Ծատուրովի կառավարիչի ՕԶԱԿՈՄ-ին ուղղված դիմումի մեջ,— և հենց այդ կոմիտեն էլ բնակչությանը դրդում է դեպի ջարդերը»։ Մի ուրիշ փաստաթղթում նշվում է, որ Արզարյանդի գյուղացիները զինված են և պատժիչ ջոկատները չեն կարողանում հնազանդեցնել նրանց։

Հետաքրքիր տվյալներ են հրապարակված նաև Հայաստանում գտնվող կայազորների զինվորների ռևոլյուցիոն ելույթների վերաբերյալ։

Ռևոլյուցիոն շարժումների աճող վերելքը բնորոշ էր ամբողջ Անդրկովկասին։ Այդ մասին են խոսում այս գլխում զետեղված բազմաթիվ փաստաթղթեր և մանավանդ ՌՍԴԲՊ(բ) Կովկասյան Երկրային առաջին համագումարի (1917 թ. հոկտեմբերի 2—7) նյութերը, որոնց մեծ մասը տեղավորված է գրախոսվող ժողովածուի հենց այս բաժնում։

Բոլշևիկների Կարսի կազմակերպության և ՌՍԴԲՊ(բ) Կենտկոմի փոխադարձ գրագրությունները, որոնք այս բաժնի հետաքրքիր փաստաթղթերից են, վկայում են ՌՍԴԲՊ(բ) Կենտկոմի և Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների միջև եղած անմիջական կապի մասին։

Ժողովածուի երկրորդ գլուխը՝ «Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակը և ռևոլյուցիոն շարժումների վերելքը Հայաստանում (1917 թ. նոյեմբեր—1918 թ. մայիս)», նվիրված է Հոկտեմբերյան ռևոլյուցիայից անմիջապես հետո, Անդրկովկասյան Կոմիսարիատի ու Սեյմի տիրապետության շրջանում Երկրամասում ու Հայաստանում սովետական կարգերի հաստատման համար հայ ժողովրդի մղած պայքարի պատմությանը։ Այստեղ զետեղված են Պետրոգրադի բանվորների ու զինվորների դեպուտատների Սովետին կից ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտեի 1917 թ. հոկտեմբերի 25-ի հայտարարությունը Ժամանակավոր կառավարության տապալման և իշխանությունը Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեի ձեռքն անցնելու մասին, ինչպես նաև Սովետների Համառուսական Երկրորդ համագումարի ընդունած պատմական դեկրետները հաշտության ու հողի մասին։ Մի շարք փաստաթղթեր պատմում են, թե ինչպիսի ջերմությամբ են ընդունում երկրամասի, ինչպես և Հայաստանի բանվորները, գյուղացիները և զինվորները Հոկտեմբերյան սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի լուրը։ Այս տեսակետից հատուկ հետաքրքրություն են ներկայացնում № № 82, 84, 85, 87, 88, 92, 94, 95, 96, 98 և այլ փաստաթղթերը, որոնք արտացոլում են Ալեքսանդրոպոլի, Կարսի, Սարիղամիշի, Լոռու և Հայաստանի բազմաթիվ այլ վայրերի բանվորա-գյուղացիական ու զինվորական մասսաների վերաբերմունքը դեպի Լենինի ղեկավարած ժողկոմսովետը, նրանց պայքարը հանուն Սովետական իշխանության, ընդդեմ երկրամասի հակառևոլյուցիոն ուժերի, ընդդեմ Անդրկովկասյան կոմիսարիատի ու Սեյմի։ Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակի առթիվ հրապարակվող թռուցիկում բոլշևիկների Ալեքսանդրոպոլի Կոմիտեն կոչ է անում բոլոր բանվորներին, զինվորներին և գյուղացիներին սերտորեն համախմբվել բոլշևիկների շուրջը, ընթանալ միայն բոլշևիկյան պարտիայի ետևից։ Այստեղ ամբողջությամբ հրապարակված է Ջալալ-օղլու (Ստեփանավան) աշխատավորության և կայազորի զինվորների 1917 թ. նոյեմբերի 10-ի միտինգի բանաձևը, որով նրանք միահամուռ կերպով պաշտպանում են Սովետական իշխանությունը և վճռականորեն մերժում հակառևոլյուցիոն պարտիաների քաղաքականությունը. «Ամբողջ իշխանությունը պետք է լինի բանվորների, զինվորների և գյուղացիների դեպուտատների Սովետների՝ որպես ժողովրդական իսկական պաշտպանների ձեռքում,— ասված է այդ բանաձևում։ Ոչ մի վստահություն կոնտրռևոլյուցիոն բուրժուազիայի և նրա հետ համաձայնող էսեռների ու մենշևիկների նկատմամբ։ Մեր ողջույնն ենք հղում Պետրոգրադի կայազորին ու պրոլետարիատին, որոնք պաշտպանում են ազատությունն ու ռևոլյուցիան...»

№ № 102, 103, 104, 106 և այլ փաստաթղթերը պատմում են, թե ինչպես Անդրկովկասի ու Հայաստանի լայն մասսաները ու վինվորները պահանջում են տապալել Անդրկովկասյան կոմիսարիատը և հաստատել Սովետական իշխանություն։

Գրքի երրորդ գլխում՝ «Դաշնակցական կառավարության և օտարերկրյա բանվորների հակաժողովրդական քաղաքականությունը Հայաստանում և աշխատավորության պայքարը իր ազատագրության համար» (1918 թ. մայիս—1919 թ. դեկտեմբեր), զետեղված փաստաթղթերը մերկացնում են դաշնակների և նրանց արևմտյան տերերի՝ նախ գերմանա-թուրքական, ապա անգլո-ֆրանսիական-ամերիկյան օկուպանտների քաղաքականության հակաժողովրդական էությունը, հարուստ տեղեկություններ են պարունակում աշխատավորական մասսաների ռևոլյուցիոն պայքարի, ինչպես նաև Սովետական Ռուսաստանի կողմից հայ ժողովրդին ցույց տրված օգնության մասին։ Այստեղ հրապարակված են Ստ. Շահումյանի և Ա. Միկոյանի նյութերը Անդրկովկասյան սեյմի ցրման և բուրժուական նոր կառավարությունների կազմակերպման մասին։

Ստ. Շահումյանը և Ա. Միկոյանը համառուսական Սահմանադիր ժողովի վիժվածք Անդրկովկասյան Սեյմի առաջացումն ու գործունեությունը բնութագրում են Անդրկովկասի հակառևոլյուցիոն ուժերի հակաժողովրդական քաղաքականության հերթական արտահայտություն։ Նույն գնահատականին են արժանանում հակառևոլյուցիոն բուրժուական կառավարությունները Վրաստանում, Ադրբեջանում և Հայաստանում։ Նրանք ցույց տվեց բոլշևիկների հայացքների ճշմարտացիությունը. դաշնակցության օրոք Հայաստանը դարձավ սովի, աղքատության և որբերի երկիր։ Բացի տեղական բնակչության մասսայական ոչնչացումից, համաճարակներից ու անապահով կյանքից ոչնչանում էին նաև տասնյակ հազարավոր գաղթականներ ու հազարավոր անտուն ու անտեր որբեր։ Այդ ծանր ժամին հայ ժողովրդին օգնության ձեռք մեկնեց ռուս ժողովուրդը։ Բերված փաստաթղթերից (№ 155, 164 և այլն), երևում է, թե ինչպես է Սովետական Ռուսաստանի կառավարությունը օգնել հայ գաղթականներին։

Ստեղծված ծանր իրադրությունը գնալով լցնում էր ժողովրդի համբերության բաժակը։ Մի շարք փաստաթղթեր պատմում են Հայաստանի բանվորների ու գյուղացիների ռևոլյուցիոն ելույթների մասին։ Այս գլխում զետեղված են նաև արևմտյան իմպերիալիստների օկուպացիոն իշխանությունների խարդախ քաղաքականությունը մերկացնող և դաշնակցական կառավարության ու ռուսական սպիտակգվարդիական ուժերի փոխադարձ կապը բացահայտող մի քանի փաստաթղթեր։

Գրքի հաջորդ գլուխը՝ «Ռևոլյուցիոն շարժումների հետագա ծավալումը Հայաստանում», պատմում է Հայաստանի բանվորա-գյուղացիական մասսաների ռևոլյուցիոն պայքարի հետագա ուժեղացման մասին։ Այս գլուխն սկսվում է Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների գործունեության վերաբերյալ Ասք. Մռավյանի և Արշ. Մելիքյանի հետաքրքրական հիշողություններով։ Հաջորդ փաստաթղթերը հանգամանորեն պատմում են բոլշևիկների ղեկավարությամբ Հայաստանի ռևոլյուցիոն շարժումների անընդհատ աճող վերելքի մասին։ Մանրամասն տվյալներ են բերված հատկապես 1920 թ. մայիսմեկյան քաղաքական վիթխարի ցույցերի և մայիսյան հակաժողովրդական զինված ապստամբության վերաբերյալ։ Ընթերցողը որոշակի պատկերացում է ստանում այդ ցույցերի և ապստամբության ծագման, ընթացքի և պարտության մասին։ Հնարավոր չէ առանց հուզմունքի կարդալ այն փաստաթղթերը, որոնք վերաբերում են ռուս և ադրբեջանական ժողովուրդների կողմից ապստամբ հայ աշխատավորությանը ցույց տված օգնության մասին։ Եվ ընդհակառակը, չի կարելի առանց զայրույթի ու ատելության կարդալ այն փաստաթղթերը, որոնք մերկացնում են օտարերկրյա իմպերիալիստների մասնակցությունը Մայիսյան ապստամբության ճնշմանը, նրա պանծալի հերոսների ոչնչացմանը։ Բազմաթիվ փաստաթղթեր տալիս են դաշնակցության օրոք Հայաստանում տիրող արյունալի ռեժիմի պատկերը։

Մի շարք փաստաթղթեր առաջին անգամ է, որ ներկայացվում են սովետական ընթերցողական հասարակայնությանը։ Դրանք ՀԿ(բ)Պ Կենտկոմի և ՌԿ(բ)Պ Կովկասյան երկրային Կոմիտեի, Արմենկոմի, ՀԿ(բ)Պ Կենտկոմի, տեղական կազմակերպությունների որոշումներ, կոչեր և թռուցիկներ են, որոնք պատմում են Անդրկովկասի ու Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների այդ տարիների գործունեության, հատկապես Հայաստանի Կոմունիստական պարտիայի ձևավորման և աշխատանքների մասին։

Վերջին՝ հինգերորդ գլուխը «Սովետական իշխանության հաղթանակն ու ամրապնդումը։ Հայկական Սովետական Սոցիալիստական ռեսպուբլիկայի կազմակերպումը» (նոյեմբեր 1920թ.

—փետրվար 1922 թ.), նվիրված է Հայաստանում սովետական կարգերի հաստատման ու ամրապնդման պատմությանը։

Հայ ժողովրդի պատմության մեջ սա մի շրջադարձային նշանակություն ունեցող էտապ է, երբ տապալվում է դաշնակների ու նրանց ամերիկյան տերերի արյունոտ լուծը և հաստատվում Սովետական իշխանություն, սկսվում է նրա պատմության նոր դարագլուխը, նոր կյանքի կերտման, սոցիալիզմի կառուցման դարագլուխը։ Հայ ժողովուրդը չէր կարող ազատագրվել կապիտալիզմի կապանքներից, եթե նրան չառաջնորդեր մեծ Լենինի ստեղծած Կոմունիստական պարտիան, եթե եղբայրական օգնության ձեռք չմեկներ նրան ռուս մեծ ժողովուրդը։

Ժողովածուի այս բաժնում զետեղված փաստաթղթերը պատմում են այն մասին, թե ինչպես Հայաստանի ապստամբ բանվորներն ու գյուղացիները տասնմեկերորդ Կարմիր Բանակի զորամասերի օգնությամբ տապալում են գոյություն ունեցող ատելի ռեժիմը և հաստատում Սովետական իշխանություն։ Հայաստանի աշխատավորության այդ հաղթանակը ջերմորեն ողջունում են ռևոլյուցիայի հանճարեղ առաջնորդ Վ. Ի. Լենինը, նրա զինակիցները, Անդրկովկասի ժողովուրդները, կոմունիստական կազմակերպությունները, եղբայրական սովետական սոցիալիստական ռեսպուբլիկաները։

Սովետական կարգերի հաստատումից հետո Հայաստանի աշխատավորությունը Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ ու ՌՍՖՍՌ-ի օգնությամբ անմիջապես ձեռնամուխ է լինում Սովետական իշխանության, պրոլետարիատի դիկտատուրայի ամրապնդմանը, քայքայված ժողովրդական տնտեսության վերականգնմանը։ Բազմաթիվ փաստաթղթեր, մասնավորապես Հայաստանի Ռևկոմի դեկրետները, պարտիայի ու կառավարության որոշումները և այլն, մանրամասն լուսաբանում են հին պետական ապարատի փլատակների վրա պրոլետարական դիկտատուրայի վերջնական ձևավորման, տնտեսության սոցիալիստական սիստեմի ստեղծման համար քաղաքական ու տնտեսական նախադրյալներ ստեղծելու պատմությունը ռեսպուբլիկայում։

«Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում» փաստաթղթերի ժողովածուն հիմնականում հաջող գործ է։ Այն 1917—1922 թթ. ընկած պատմական ժամանակաշրջանի իրադարձություններին վերաբերող համեմատաբար լիարժեք, հարցերի ու խնդիրների մեծ խումբ ընդգրկող, ամբողջական ժողովածու է։

Ժողովածուում զետեղված նյութերից շատերը լուսաբանում են երկրամասում Սովետական իշխանություն հաստատելու համար Անդրկովկասի բազմազգ ժողովուրդների ինտերնացիոնալ պայքարը, ինչպես և նոր, երջանիկ կյանք ստեղծելու համար նրանց համատեղ աշխատանքն ու փոխադարձ օգնությունը։ Գիրքը բավականաչափ տվյալներ է պարունակում Հայաստանի Կոմպարտիայի ու Սովետական կառավարության առաջին ամիսների գործունեության պարզաբանման վերաբերյալ։

Սակայն կազմողների մեղքով գրքում սպրդել են մի շարք սխալներ, որոնք վերացնելու դեպքում ժողովածուն բավականաչափ կշահեր։ Նշենք դրանցից ամենագլխավորները։

Չափից ավելի համառոտ է ժողովածուի առաջաբանը։ Լավ կլիներ, եթե այն գրվեր մի փոքր ընդարձակ, շոշափվեր այնտեղ հայ ժողովրդի պատմական բախտի հարցը, ընդգծվեր Հայաստանը Ռուսաստանին միացնելու պատմական ակտի պրոգրեսիվ նշանակությունը։ Հիշատակվեին և արժեքավորվեին Հայաստանի 1917—21 թթ. ռևոլյուցիոն շարժումները լուսաբանելու նպատակով 1920-ական և 1930-ական թվականներին լույս տեսած ժողովածուները։

Աշխատությունն ունի նաև կառուցվածքային որոշ թերություններ։ Մեր կարծիքով կարիք չկար դաշնակցության տիրապետության կարճատև շրջանի իրադարձությունները տալ երկու գլխով։ Վատ չէր լինի եթե երկրորդ և երրորդ գլուխները տրվեին միասին մի գլխում։ Ժողովածուի ժամանակագրական բնույթը տեխնիկական դժվարություններ է առաջացրել հարցերը խմբավորելու իմաստով։ Մեր կարծիքով լավ կլիներ, եթե օգտագործվեր ռևոլյուցիոն շարժումներ Հայաստանում 1905—1907 թթ. «Փաստաթղթերի և նյութերի ժողովածուի» հրատարակման փորձը, և բանվորական, գյուղացիական, զինվորական ռևոլյուցիոն շարժումներին և այլ կարգի խնդիրներին վերաբերող փաստաթղթերը տրվեր խմբավորված ձևով։ Ճիշտ է, այդ կպահանջեր շատ ջանքեր, սակայն արդյունքը կլիներ դրական և կստացվեր ավելի հաջող գործ, որն ավելի կհեշտացներ նրանում շոշափված հարցերի ուսումնասիրությունը։ Պետք է նկատել, որ տեղ-տեղ խախտված է նաև ժամանակագրական կարգը։ Այսպես օրինակ, իրենց տեղում չեն №№ 119, 120, 121. 122, 123 և մանավանդ 380, 398, 399 և այլ փաստաթղթերը։

Համարյա թե ոչ մի տվյալ ու փաստաթուղթ չի բերված հատկապես Ալավերդու և Ղափանի բանվորական շարժումների վերաբերյալ։ Սակավաթիվ են Ղարաքիլիսայի (Կիրովական),

Ալեքսանդրապոլի (Լենինական) և մի քանի այլ շրջանների մինչև 1920 թ. մայիսը տեղի ունեցած ռևոլյուցիոն շարժումների վերաբերյալ տվյալները։

Տեղ-տեղ կան ոչ բոլշևիկյան մամուլից ու աղբյուրներից բերված ավելորդ ու անտեղի նկարագրություններ (տես № 169, 170, 172, 173 և այլ փաստաթղթեր)։ Կարծում ենք, որ լավ կլիներ, եթե բոլորովին չբերվեին № 117 և 118 փաստաթղթերը, որոնք զինվորական էշելոնների զինաթափման մասին գերազանցապես մենշևիկյան բնույթի փաստաթղթեր են, կամ թերևս դրանց հետ քաղվածաբար բերվեին Ստ. Շահումյանի և Ի. Ստալինի համապատասխան հոդվածները, ինչպես և կարելի էր տալ անհրաժեշտ ծանոթագրություններ։ Ժողովածուում բերված վերոհիշյալ փաստաթղթերը բոլորովին էլ չեն պարզաբանում, եթե միայն չեն մթագնում, արծարծված հարցը, քանի որ այստեղ անտեսված է բոլշևիկյան տեսակետը։

Ժողովածուն կազմողները բերելով 263 և 275 փաստաթղթերը (առաջինը Կոմինտերնի երկրորդ կոնգրեսում ՀԿՊ ներկայացուցչի զեկուցման մի մասն է, իսկ երկրորդը՝ Արևելքի ժողովուրդների համագումարում Հայաստանի դելեգատների զեկուցման տեքստը) ծանոթության մեջ չեն նշում, որ այնտեղ սխալ կերպով է հայտարարվում, թե իբր Հայաստանում ցարական ռեժիմի ժամանակ հողային հարց համարյա չի եղել, եթե չհաշվենք վանքապատկան հողերը ցարական կառավարության կողմից բռնագրավելու հարցը։

Անհրաժեշտ էր, որ ժողովածուում բերված մի շարք փաստաթղթեր պարզաբանման և մեկնաբանման ենթարկվեին, օր. №№ 293, 294, 295, 296 և այլն։

Չնայած այս և մի քանի այլ թերություններին, «Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում» (փաստաթղթերի ժողովածու) գիրքն արժեքավոր և օգտակար գործ է։ Ցանկալի է, որ արագացվի նրա հայերեն հրատարակությունը, և հասարակությունը ունենա այն իր ձեռքի տակ, առանց նշված թերությունների։

Վ. ՆԵՐԿԱՐԱՐՅԱՆ

## Исследование об экономическом развитии Восточной Армении в XIX в.

В конце 1957 г. Издательство Академии наук Армянской ССР выпустило в свет работу М. Адонца «Экономическое развитие Восточной Армении в XIX в.».

Разработка истории народного хозяйства Армении имеет исключительно большое научное значение. Исследованию отдельных вопросов развития народного хозяйства Армении посвящены работы Рштуни о крестьянской реформе 1870 г., М. Есаяна о мюлькадарском праве, А. Марухяна о сельском хозяйстве дореволюционного периода, ряд ценных журнальных статей. Широкий охват истории развития экономики Армении имеет труд О. Туманяна.

Ценность труда М. Адонца заключается в том, что здесь всесторонне и глубоко рассматривается определенный период развития экономики, начиная с эпохи разложения феодализма в Армении до XX в.

Книга т. Адонца богата статистическим материалом и историческими фактами, собранными как из литературных источников, так и из архивов. Материал систематизирован в соответствии с теми задачами, которые поставил перед собой автор.

Первый и второй разделы посвящены периоду разложения феодализма в Армении, причем в первом разделе автор анализирует период